ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անուն, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Կարեն Ալավերդյան, ՀՀ ֆինանսների նախարարության հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման, հաշվետվությունների մշտադիտարկման վարչության պետ

2. Գործուղման վայրը և ժամկետները

ք. Բանգկոկ (Թաիլանդի Թագավորություն), 2023 թվականի սեպտեմբերի 11-15ը

3. Հրավիրող կողմը

Ասիական զարգացան բանկ

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցություն Չինաստանի Ժողովրդական Հանրապետության ֆինանսների նախարարության Ասիա-Խաղաղօվկիանոսյան և ֆինանսների զարգացման ինստիտուտի և Ասիական զարգացման բանկի անկախ գնահատման վարչության կողմից համատեղ կազմակերպված «2023 Ասիական գնահատման շաբաթ. Զարգացման արդյունավետության գնահատում վերականգնումից հետո» խորագրով միջոցառմանը:

5. Քննարկված թեմաները

- Քննարկում հաշվետվողականության մասին
- Ուսուցումը գործողության մեջ. ընդլայնե՞լ գնահատման գործիքների շրջանակը
- Գաղափարներ և նորարարություն. ինչն է նպաստում կառավարությունում տվյալների և ապացույցների հետ կապված կարողությունների զարգացմանը
- Նորարարություններ գնահատումներում. միջազգային դոնորների փորձը
- Պատրա՞ստ են բազմակողմ զարգացման բանկերը խթանել նորարարությունը կայուն և մասնավոր հատվածի զարգացման համար:

- Մեծանալ, փոքրանալ և դուրս գալ հարմարավետության գոտուց. Ընդլայնել զարգացման արդյունավետության գնահատման սահմանները
- Համատեղ գնահատումների դերը՝ որպես երկրի համակարգային զարգացման արդյունավետությունը խթանելու գործիք
- Արհեստական բանականության վրա հիմնված գնահատումներ. առավելագույնի հասցնել արդյունավետությունը՝ նվազագույնի հասցնելով ռիսկերը
- Մեկ չափը բոլորին չի համապատասխանում. Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում գնահատման միջազգային նորմերի հարմարեցում և ընդունում
- Կանաչ զարգացման քաղաքականության գնահատումներ
- Ճգնաժամի վերականգնումից մինչև երկարաժամկետ զարգացում. քաղաքականությունների վրա հիմնված վարկավորման դերը:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Միջոցառման ընթացքում ներկայացվել է հաշվետվողականության դերը կառավարության, միջազգային ֆինանսական հաստատության (ՄՖՀ) և լրագրողի տեսանկյունից: Բանախոսները, որպես հաշվետվողականության մեխանիզմների հիմնական խաղացողներ, խոսել են կառավարությունների, ՄՖՀ-ների՝ իրենց համապատասխան միջավայրերի առջև հաշվետու լինելու անհրաժեշտության մասին:

COVID-19 համաճարակը և վերականգնման միջոցառումների սահմանումը բազմաթիվ մարտահրավերներ են ստեղծել անկախ գնահատման ավանդական ձևերի համար: Ապացույցների վրա հիմնված որոշումների կայացումը փոփոխվող միջավայրում պահանջում էր արագ գնահատումներ և գործնական (ժամանակին և հակիրճ) եզրահանգումներ ու գաղափարներ ստեղծելու կարողություններ:

Միջոցառման ընթացքում ներկայացվել են այն իրավիճակները, որոնց պայմաններում զարգացող երկրների կառավարությունները տվյալներ և ապացույցներ են օգտագործում, և ինչպես կարող են համաշխարհային և ազգային կազմակերպությունները կայուն ձևով զարգացնել իրենց կարողությունները: Կամբոջայի և Հնդկաստանի կառավարությունների փորձագետները քննարկել են այն գործնական սահմանափակումները, որոնց նրանք բախվում են տվյալների և ապացույցների օգտագործման ժամանակ, ինչպես նաև կարողությունների զարգացմանն ուղղված աջակցության այն տեսակները, որոնք լավագույնս են ազդել նրանց աշխատանքի վրա:

Բացի այդ, քննարկումների ընթացքում նշվել է, որ արհեստական բանականության օգտագործումը կարող է արագացնել ԿԶՆ-ներին հասնելուն՝ ապահովելով նորարարական և արդյունավետ լուծումներ գլոբալ մարտահրավերներին դիմակայելու համար: Չնայած արհեստական բանականությունն ունի բազմաթիվ առավելություններ, այն նաև պարունակում է նշանակալի ռիսկեր, որոնք պետք է կառավարվեն: Գնահատումը կարող է վճռորոշ դեր խաղալ արհեստական բանականության հետ կապված ռիսկերը մեղմելու գործում՝ ապահովելով արհեստական բանականության համակարգերի գնահատման և վավերացման շրջանակ: Ավելին, արհեստական բանականության ներառումը գնահատման տարբեր փուլերում կարող է հեղափոխել գնահատման գործընթացը՝ բարձրացնելով արդյունավետության օգուտները, բարելավելով ապացույցների ձեռքբերումը և մշակումը, հնարավորություն տալով գնահատումներ կատարել իրական ժամանակում՝ անհրաժեշտ տվյալների հավաքագրման և ժամանակին հետադարձ կապի և վերլուծության միջոցով:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Առկա չեն

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Առկա չեն

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Սեպտեմբերի 20, 2023թ.

9/20/2023

X

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ԿԱՐԵՆ

Signed by: ALAVERDYAN KAREN 2602830070